Պարոն/Տիկին Ն. Գաբրիելյան ***ին***
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

_____

խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

_____

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Մ. Մեսրոպյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Մ. Մեսրոպյան _____

«02» 11 2026թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Գործուղվող աշխատակցի անունը, ազգանունը՝**
   - Մերի Ղազարյան:
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
   - ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության պետ:
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Աթենք, Հունաստան, 2026 թվականի հոկտեմբերի 26-27-ը:
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝** Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA):
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** մասնակցել էներգիայի անցման ցանցերի կոմիտեի (GET COM) հերթական հանդիպմանը ՝ որպես կոմիտեի փոխնախագահ: Հանդիպումը կրում էր հիբրիդ ձևաչափ (պետք է լիներ միայն առկա ձևաչափով)՝ առկա և առցանց:
6. **Քննարկված թեմաները (հարցերը)՝** Աշխատանքային հանդիպման առաջին օրը կոմիտեի նորընտիր նախագահ տիկին Լիա Գվազավան բացման խոսքից հետո ղեկավարեց ցանցային կարգավորմանն առնչվող էներգետիկ ոլորտի (էլեկտրամատակարարման և գազամատակարարման) վերջին նորությունների վերաբերյալ կլոր սեղանը: Հանդիպմանը առկա ֆորմատով մասնակցող երկրների կարգավորող հանձնաժողովների

ներկայացուցիչները զեկուցեցին տվյալ ուղղությամբ փոփոխությունները (թարմացումները): Մասնավորապես, զեկույցներ ներկայացրեցին Մալեկ Իկրամը (CREG, Ալժիր)՝ էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման հաղորդման ցանցերի ներկա վիճակի և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների (ՎԷՌ) մասնաբաժնի վերաբերյալ, Մերի Ղազարյանը (ՀԾԿՀ, Հայաստան)՝ էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքի, էլեկտրաէներգետիկական շուկայի վերջին տարիների զարգացման, արևային ֆոտովոլտային կայանների արագ ինտեգրման և պահեստավորման համակարգերի վերաբերյալ նոր կարգավորումների մասին, Ստեֆան Կացմանը (E-Control, Ավստրիա)՝ գազամատակարարման համակարգերի, ցանցի և գազի սակագների փոփոխությունների վերաբերյալ, ինչպես նաև Միրմահամմադալի Ասլանովը (AERA, Ադրբեջան), Անջելո Բոսկովիչը (SERC, Բոսնիա և Հերցեգովինա), Սաշա Սչեկիչը (FERK, Բոսնիա և Հերցեգովինա), Իվանա Լուկասը (HERA, Խորվաթիա), Վիեստուս Կադիկիսը (PUC, Լատվիա), Կրիստինա Ելենա Պիրվուն (ANRE, Ռումինիա), Իլկայ Արիոզը և Իբրահիմ Օգուզ Օդաբաշը (EPDK, Թուրքիա):

Այնուհետև կոմիտեի փոխնախագահ Վիեստուս Կադիկիսի ղեկավարությամբ տեղի ունեցավ դեպքերի ուսումնասիրությունների (Case Study) ներկայացում գազամատակարարման և էլեկտրամատակարարման ոլորտներում կապիտալ ներդրումների (CAPEX) գնահատման և պլանավորված ներդրումների (WACC) որոշման խորագրով: Զեկույցներ ներկայացրեցին Լատվիայի, Ավստրիայի, Խորվաթիայի և Թուրքիայի ներկայացուցիչները՝ նկարագրելով իրենց երկրներում ներդրումների գնահատման և իրականացման կարգավորվող ժամանակահատվածները, սակագների մեջ դրանց ներառման տոկոսային հարաբերակցությունները: Օրինակ, Խորվաթիայի մասնակիցը ներկայացրեց գազի բաշխման սակագների սահմանման մեթոդաբանությունը և WACC-ը 2021-2026 և 2027-2031 կարգավորման ժամանակահատվածների համար:

Հաջորդիվ ERRA-ի կարգավորման հարցերով ավագ մասնագետ Միխեիլ Օդիշարիան ներկայացրեց ERRA-ի անդամ-երկրների գործունեության դաշտի քարտեզագրման վերաբերյալ զեկույցը՝ կենտրոնանալով ցանցային սակագների և կարգավորման այնպիսի ոլորտների վրա, որոնք առնչվում են GET-ի աշխատանքների շրջանակին:

Զեկույցները ուղեկցվեցին բազմակողմանի հարցադրումներով և քննարկումներով, որի արդյունքում ծրագրով նախատեսված կոմիտեի աշխատանքային պլանի վերաբերյալ քննարկումը տեղափոխվեց հաղորդ օր:

Աշխատանքային հանդիպման երկրորդ օրը տեղի ունեցավ 2026-2028թթ.-ի կոմիտեի աշխատանքային ծրագրի քննարկում, որի ընթացքում դիտարկվեցին թեմաների առաջնահերթությունները՝ ըստ աշխատանքային ծրագրի 4 ուղղությունների, հաջորդ հանդիպման համար թեմաների նախնական ընտրությունը և զեկույցներով հանդես գալու նկատառմամբ կամավորների ներգրավումը, ինչպես նաև GET-COM 2027 զեկույցի համար աշխատանքային ծրագրում առկա թեմաներից հնարավոր ընտրությունը: Նախնական քննարկման արդյունքները ընդհանրացրեց ERRA-ի ծրագրի ղեկավար Գոգա Դարասելիան:

Այնուհետև Ավստրիայի և Ռումինիայի մասնակիցները ներկայացրեցին «Գազի փոխադրման ցանցի զարգացման ծրագրերի (TYNDP gas) վերաբերյալ գործնական օրինակի դիտարկմամբ» զեկույցներ: Մասնավորապես, Ավստրիայի մասնակցի զեկույցը ներառում էր Ավստրիայում էլեկտրաէներգիայի և գազի հաղորդման ցարցերի զարգացման պլանավորման համապարփակ տեսլականը, իսկ Ռումինիայի մասնակցի զեկույցը ներառում էր գազամատակարարման համակարգի զարգացման 2026-2035 պլանի վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում միջպետական գազամատակարարման և ջրածնային նախագծերը:

Երկրորդ օրվա օրակարգում նախատեսված էր նաև կլոր սեղան՝ նվիրված հաղորդման ցանցերի (էլեկտրաէներգիայի և գազի) զարգացման ծրագրերին, կարգավորողի կողմից դրանց գնահատման և հաստատման գործընթացին: Սակայն ինտենսիվ քննարկումները սպառեցին նախատեսված ժամանակը և կոմիտեյի նախագահությունը որոշեց տվյալ քննարկումն իրականացնել մյուս հանդիպմանը:

7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Աշխատաժողովի ընթացքում որոշվեց հանձնաժողովի հաջորդ աշխատանքային հանդիպումն իրականացնել առցանց ֆորմատով 2027 թվականի հունվարի 26-ին, իսկ առկա ֆորմատով (ֆիզիկական) հանդիպումը՝ 2027 թվականի գարնանը: ERRA-ի ծրագրի ղեկավար Գոգա Դարասելիան ընգծեց, որ եթե մասնակից երկրներն ունեն հնարավորություն ընդունելու իրենց կազմակերպությունում գալիք առկա հանդիպումը, ապա անհրաժեշտ է դիմել ERRA-ի գրասենյակ, ինչպես նաև տեղեկացրեց, որ կոմիտեի քաղաքականության մեջ տեղի է ունեցել մեկ կարևոր փոփոխություն. առկա հանդիպումների դեպքում լիիրավ և ասոցացված անդամները կարող են անվճար գործուղել առավելագույնը երկու ներկայացուցիչ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Աշխատաժողովի ընթացքում ընտրվեցին հաջորդ օնլայն հանդիպման համար նախնական թեմաները, միևնույն ժամանակ սահմանվեց վերջնաժամկետ՝ մինչև նոյեմբերի 6-ը էլեկտրոնային տարբերակով առաջարկություններ ներկայացնելու համար:

Գործուղվող ---------- ***Մ. Ղազարյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով___

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ Հրաման 797-Հ, 26.08.2026թ. և Հրաման 977-Հ , 14.10.2026թ.

ՀՀ ՀԾԿՀ հանձնաժողովի ֆինանսատեխ.և դիմումների քննարկման վարչության պետ՝ Մերի Ղազարյան

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.Աթենք /Հունաստան /

5. Գործուղման ժամկետները Գիշերավարձ՝ 25.10.2026-28.10.2026 թթ., Օրապահիկ՝ 25.10.2026-27.10.2026թթ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Մերի Ղազարյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)		-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	191,766	191.766
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	165	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	214,335	214.335
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	61	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	25,877	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	77,631	77.631
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (ճանապարհածախս)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		483,732	483.732

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ա)

Ամսաթիվ 04.11.2026թ.